ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

37 Ապրիլի 1869 ամի, մեք 'ի նկատոյ ստորագրեալքս Անդամք Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջեւանի ժողովեալ 'ի միասին վասն վերահասու լինելոյ Ընկերութեան 1869 տարւոյն մէջ ունեցած մնացեալ եւ ծախուց հաշուոյն, գտաք նախ՝ որ ընկերութեան մատեաններըը գործադրուած են Հոգաբարձուաց խորհրդարանին ձեռք օրինաւոր եղանակաւ ըստ կարգին, և երկրորդ՝ տասն տոմսակներն առաջին նեղքին փոխառութեան 'ի գումար 1300 ռուբլեաց արծ., մի պանքական պիլէթն 'ի գումար 100 ռուբլեաց արծ. և պատրաստի գումարն 3268 ռուբլի 74 կոպ. արծ.՝ ամբողջ կը դանուին ընկերութեան գանձապահին մօտ։ Կարգաւորեցաք. նախ՝ որովհետև ըստ զօրութեան Կանոնադրութեան Ընկերութեանս տա ձեռն հարկաւոր դրամագլուխն կը կազմեն հիմնական և պատրաստական դրամագլխոց չորս մասին երեք մասն, և թէ անցեալ 1868 ամին մէջ գոյացած 'ի տարեկան բաժանորդագնոց անդամոց, կամաւոր նուիրատաց, տոկոսաց հիմնական և պատրաստական դրամագլխոց 947 ռուբլի 90 կոպ. արծ. դրամոց գումարէն ծախուկ և ժառանգաւորաց Դպրոցին և Խորհրդարանի կառավարութեան համար 499 ռ. 16 կ. արծ., ուստի առաջարկել Հոգաբարձական խորհրդարանին որ ներկայ տարւոյս մէջ նոյնպիսի ծախուց համար 'ի գործ դնել մնացեալ 211 ռ. 76 և կէս կ. արծ. և ներկայ տարւոյս մէջ գոյացեալու հիմնական և պատրաստական դրամագլխոց տոկոսաց և անդամոց բաժանորդագնոց չորս մասին երեք մասը։ Երկրորդ՝ մեծարոյ պարոնայք բժիշկ Յովհաննու Մինասեան Պէրպէրեանց, մահտեսի Պարապետի Յլիմեանց, Գէորգայ Պետրոսեանց և Յովհաննու Նաւումեան Սահրատեանց աղքատասիրական գործոնեայց և նուիրագործութեանց համար յայտնել նոցա լիուլի շնորհակալութիւն։ Երրորդ՝ համաձայն ԺԸ. յօդուածոյ Կանոնադրութեան Ընկերութեան այս կարգաւորութիւնը և 1868 ամի տարեկան հաշիւը տալ տպել վասն ընդհանուր տեղեկութեան։

(Ի վերոյ բնագրին ստորագրեալ են Անդամք Մարդասիրական Ընկերութեան վաթսուն անձինք).

Ընդ բնագրին համեմատ է. Նախագահ խորհրդարանի Ընկերութեանն ԵՊԻՓԱՆ ՊՈՊՈՅԵԱՆՑ.

Ազնուական Պարոն Պօղոս մէլիք Գարագէօզեանց Գ. Պարաբաղցի՝ յօգուտ և 'ի յառաջադիմութիւն Հայոց օրիորդաց դպրոցին Երեւանայ երկու հարիւր ռուբլի նուիրած լինելով, ըստ խնդրագրութեան բարեպաշտ Տեսչուհւոյն յիշեալ դպրոցի, և ըստ յայտարարութեան Աւժանապատիւ փոխ.— թեմական Երեւանայ, Գ. Լիհտիսա Կաթողիկոսը բարեհաճեցաւ յատուկ կոնդակ Հայրապետական օրհնութեան շնորհել փեբրուարիշեալ Ազգասէր և ուսումնասէր նուիրատուին։

Այլ թէ յիշեալ եռանդուն Հայը՝ իւր այսպիսի առատաձեռն բարերարութիւնը իւրաքանչիւր տարի շարունակելու անձկալի ուխտը կրելով, նաև մեր սիրելի Ազգայնոց ձեռնհաս մասին բարի նախանձ և յորդոր ներգործելու գիշերիկ համբաւը ստանայր։

Թ.-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ԵՒԱՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ.

"Հունկար—Իակելիսի դաշտափայրն կրէկ (Մայիսի 24 ին), Ազգային Սահմանադրութեան ինեներորդ տարեդարձին առաւել շքեղութիւն պիտի տար, եթէ անձրեւը